

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԽՆԳԻՐԸ

Համո Օհանջանյանի 1916թ. դեկտեմբերի 10-ի զեկուցագիրը՝
Վասպուրականի հայության վիճակի մասին*

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Արևմտյան Հայաստանի ազատագրված երկրամասերից հայ հասարակությունն առավել ուշադրությամբ էր հետևում Վան-Վասպուրականի կացությանը: Վանի 1915թ. մայիսյան ազատագրումը և Արամ Մանուկյանի նշանակումը ժամանակավոր կառավարչի (նահանգապետի) պաշտոնում մեծ հույսեր էին արթնացրել հայության սրտում: Ենթադրվում էր, որ Արևմտյան Հայաստանը կստանա ինքնավարություն, իսկ Վանը կդառնա ինքնավար Հայաստանի մայրաքաղաքը: Ուստի, պատերազմի օրերին հայ հասարակությունն իր ջանքերի ու հնարավորությունների մեծ մասն ուղղում է վասպուրականցիներին օժանդակելու նպատակին¹:

Ու թեև 1915թ. հուլիսյան տարօրինակ «նահանջը» նվազեցրեց այդ հույսերը և Վան-Վասպուրականի հայությունը կրեց ահռելի մարդկային կորուստներ ու նյութական վնասներ², իսկ 1915թ. օգոստոսի 1-ին Վանը վերագրավելուց հետո ռուսական իշխանությունները սկսեցին զանազան արգելքներ հարուցել Վանի նահանգ վերադառնալու փորձեր անող հայերի առջև, բայց Վասպուրականի վերաշինության գործը շարունակվեց նաև հաջորդ տարիներին: Արդյունքում՝ Վան-Վասպուրականի հայությունը ստիպված եղավ Առաջին աշխարհամարտի ընթացքում ևս չորս անգամ վերադառնալ, սկսել վերաշինության հետ կապված աշխատանքները և կրկին թողնել ամեն ինչ ու հեռանալ:

Վասպուրականցիների նման համառությունն ու հաստատակամությունը դառնում էր լուրջ խոչընդոտ ցարական կառավարության որդեգրած քաղաքականության ճանապարհին, որի նպատակներն առավել ցայտուն կերպով դրսևորվեցին 1915թ. օգոստոսին Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի

* Ընդունված է տպագրության 11.03.2010:

1 Տե՛ս Ասրյան Ա. Ս., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Ե., 2008, էջ 121-143:

2 Տե՛ս Հարությունյան Ա. Հ., Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915թ. հուլիսյան գաղթը, «ԼՀԳ», 2002, N 2, էջ 47-54:

ԻԿ(Ը) փարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական համոթես

հրամանատար նշանակված մեծ իշխան Ն. Ն. Ռոմանովի օրոք, երբ ռուսական ռազմական և քաղաքացիական իշխանությունները բացահայտորեն հովանավորում էին քրդերին: Մինչդեռ, պատերազմի ողջ ընթացքում քրդերը օսմանյան գորքերի հավատարիմ դաշնակիցներն էին, որոնք զգալի վնասներ հասցրին հատկապես՝ ռուսական բանակի թիկունքային ստորաբաժանումներին: Իսկ ռուսական իշխանությունների կողմից քրդերից կազմված «կամավորական» ստորաբաժանումներն առաջին իսկ օրից ցույց տվեցին, որ լավագույն դեպքում հետաքրքրվում են միայն կողոպուտի ու թալանի գործով:

Անշուշտ, ռուս բարձրաստիճան գինվորականների շրջանում կային նաև սպաներ, որոնք աջակցում և օգնում էին հայերին: Նրանցից կարելի է հիշատակել Պրիմորսկյան ջոկատի (Կովկասյան 1-ին բանակային կորպուս) հրամանատար, գեներալ Վլ. Պ. Լյախովի, Ալաշկերտում՝ գեներալ Ն. Ն. Վորոպանովի, Վանի օկրուգի պետ, փոխգնդապետ Ալֆրեդ Տերմենի և այլոց անունները: Այսպես, 1915թ. աշնանը, Ա. Տերմենի նախաձեռնությամբ Վանում ստեղծվեց երկրապահ ստորաբաժանում Արմենակ Եկարյանի հրամանատարությամբ, որի տեղակալն էր Ջիմ Չանկալյանը³:

Չնայելով ցարական հրամանատարության կողմից հարուցվող բազմաթիվ արգելքներին, պատերազմի ընթացքում վասպուրականցիները համառորեն շարունակում էին վերադառնալ և ձեռնամուխ լինել քանդված օջախների վերականգնմանը և գյուղատնտեսական աշխատանքների վերսկսմանը: 1916 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ Վասպուրականում բնակվում էին 12639 հայ, 817 ասորի և 191 թուրք: Վանում բնակվող ասորիները կազմել էին մարտական խումբ՝ 60-ից 70 հոգի, որոնք իշխանությունների կողմից ժամանակ առ ժամանակ ուղարկվում էին հետախուզության⁴:

Պատերազմի սկզբում հայ հասարակության ուշադրությունը հիմնականում ուղղված էր կամավորական խմբերին և գաղթականությանը նյութապես ապահովելուն: Սակայն կամավորական խմբերի լուծարումից հետո հայ հասարակական-քաղաքական և հոգևոր շրջանակներն իրենց ողջ ջանքերն ու նյութական միջոցներն ուղղում են Արևմտյան Հայաստանի վերաշինությանը: Այստեղ իրենց գործունեությունն են ծավալում ոչ միայն հայկական, այլև ռուսական, ամերիկյան, ինչպես նաև անգլիական բարեգործական կազմակերպությունները:

Գյուղատնտեսական աշխատանքները վերսկսելու և բնակչության կարիքները պարզելու համար մի քանի անգամ Վասպուրական են ժամանում Թիֆլիսի «Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության» նախագահ Ավ. Սահակյանը և փախստականների խնդրով լիազոր, գեներալ Վասիլի Թամանյանը (Թամանջյան): Ի թիվս հայ մտավորականության այլ ներկայացուցիչների, Վան է ժամանում նաև ազգային-ազատագրական շարժման և ՀՅ Գաշնակցության ճանաչված գործիչ, մասնագիտությամբ բժիշկ Համազասպ (Համո) Օհանջանյանը:

Ստորև ներկայացվող փաստաթուղթը, որը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), իբրև Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Վանի և Պարսկաստանի լիազոր 1916 թ. սեպտեմբերի 1-ից Վանում

3 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, N 200, 7 սեպտեմբեր 1916 թ.:

4 Տե՛ս «Աշխատանք», N 83, 25 փետրուար 1917 թ.:

գտվող Համագասապ Օհանջանյանի զեկուցագիրն է: Փաստաթուղթը տպագրվում է առաջին անգամ՝ ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, բայց ոճի պահպանմամբ: Փաստաթղթի վերնագրումը կատարվել է մեր կողմից: Մեր մյուս միջամտություններն արվել են ուղղաձիգ փակագծերով, սակայն ընդգծումները փաստաթղթինն են:

Ռուբեն Օ. Սահակյան
պատրմ. գիրք. թեկնածու

THE QUESTION OF REBUILDING WESTERN ARMENIA

Hamo Ohanjanyan's report of December 10, 1916 on the state of the Armenians of Vaspurakan

Ruben O.Sahakyan

Ի(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական համրես

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՆԻ ԵՎ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՕՐ ՀԱՄԱԶԱՍՊ ՕՀԱՆՁԱՆՅԱՆԻ
ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ**

10 դեկտեմբերի 1916թ.
Թիֆլիս

**Գրութիւնը Վանում
(Ընդհանուր տեսութիւն)**

Փափագեանից⁵ հաշիւները ստանալուս պէս, սեպտեմբերի 1-ին Վան հասայ: Յուլիսեան [1916թ.] նահանջից յետոյ քաղաքն ամայի էր:

Հայը՝ Վօրօնօվի և Տերմէնի օրով՝ ամենասատելի տարրն էր: Տերմէնի անգօր համակրանքը դէպի հայերը՝ աւելի բորբոքում էր Վօրօնօվի ատելութիւնը դէպի Վասպուրականցիւն:

Երկու իշխանութիւններ՝ քաղաքական և զինուորական՝ ընդհարում էին իրար հետ, ժողովուրդին պատրակ արած և միշտ ժողովուրդն էր լինում տուժողը:

Բռնի կերպով տանում էին ժողովրդի խոտերը, կտրում էին պտղատու ծառերը, քանդում էին անտէր մնացած տների դռներն ու սանդուխքները և պատուհանները և այրում: Արգելելու համար չէր կարելի միջամտել, որովհետև այդ կը նշանակէր թշնամանալ Վօրօնօվի հետ և արտրվել Վանից:

Այդ ժամանակաշրջանը Վանի ռուս-քրդական բարեկամութեան մեղրամիսն էր: Իշխան Շախօվսկիին⁶ ցեղապետ Բէիրի բէկի հետ բանակցութեան մէջ էր և գործում էր Քեամիլ բէկի հետ ձեռք-ձեռքի տաւ: Նա կազմեց քրդական և ասորական դրուժինաներ: Հայերից հաւաքում էին եղած զէնքերը, իսկ աւելացնում էին քրդերի զէնքի պակասութիւնը:

Քաղաքն սկսեց կենդանանալ: Եկան և միւս կազմակերպութիւնները, բայց եկան և գնացին: Մնացին միայն Քաղաքների միութիւնը⁷ և Բարեգործական

5 Փափագյան Վահան (Կոնս) (1876-1973) - հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ԳՅԳ անդամ, օսմանյան խորհրդարանի պատգամավոր: Մինչև Գ. Օհանջանյանի ժամանելը՝ Վ. Փափագյանը եղել է ԿԳԲԸ-ն Վանի լիազորը: 1919-1920թթ. հայկական պատվիրակութեան կազմում մասնակցել է Փարիզի խաղաղութեան վեհաժողովին:

6 Իշխան Շախօվսկիին եղել է Երզրումում ռուսական Գլխավոր հյուպատոսության քարտուղարը, իսկ պատերազմի նախօրյակին՝ Դամասկոսում ռուսական հյուպատոսը: Կովկասի փոխարքա Ն. Ն. Նիկոլակի կողմից լիազորվել էր հետաքննելու համար բրդերի նկատմամբ հայերի կողմից իբր իրականացված «բռնությունները»:

7 "Союз городов"-«Քաղաքների միություն» (ճգրիտ անվանումն է՝ "Всероссийский союз городов" («Յամառուսաստանյան քաղաքների միություն») և "Земский союз"- (ճգրիտ անվանումն է՝ "Всероссийский земский союз"): 1915 թ. հուլիսի 10-ին միավորվել են և կոչվել "Ձեմստվային և քաղաքային միությունների միացյալ կոմիտե" - Ձեմգօր ("Объединённый комитет Земского союза и Союза городов"): Միացյալ կազմակերպության նպատակն էր օգնել բանակին մատակարարելով պարեն: Կազմակերպությունն ուներ իր մասնաճյուղը Կովկասում: Ռուսական բանակի գրաված շրջաններում իրականացրել է գյուղատնտեսական աշխատանքներ: Լուծարվել է 1918 թ. հունվարին՝ խորհրդային Ռուսաստանի ժողովրդների դեկրետով:

ընկերությունը⁸:

Քաղաքների միութեան կողմից մինչև այսօր համարեայ թե աչքի ընկնող ոչինչ չի արած: Կարգի է բերած միայն Միութեան շենքերն ու գրասենեակը և գործելու համար սպասում են մթերքի և այլ պարագաներու:

Գաղթականական գործի ամենաձանր մասը ամբողջապես ընկնում է Բարեգործականի վրայ: Նա է, որ ստանձնել է մօտ 18000 ժողովրդի պարենատրաման գործը, ինչպես և կրթական ու ուրիշ շատ և շատ պարտատրություններ:

Ժողովուրդը որոշել էր չը թողնել Վասպուրականը ինչ գնով էլ լինի, նոյնիսկ մեր գործիչների փախուստի տխուր օրինակի հակառակ: Եւ այդ որոշումը ամենախոհեմն ու նպատակայարմարն է: Բնագործն ըմբռնելով իրերի դրությունը, նա համոզված է, որ թողնելով Վասպուրականը, ինքը այլևս նրա տերը չէ՝ քիչդն ու ասօրին են նրան տիրելու:

Մեզ մնում էր միայն հպատակել այդ որոշման և խրախուսանքով կանգնել ժողովրդի կողքին:

Պարենատրաման ձեռնարկ

Տասն և ութ հազար բնակչութեան պարենատրումը ինքն ըստ ինքեան շատ բարդ ձեռնարկ է: Բացւած են մթերանոցներ և խանութներ Վանում և Թիմարի Ալիւր գիւղում: Բայց որովհետև անկարելի էր եղած փոխադրական միջոցներով կարիքի չափով մթերք ստանալ Կովկասից, ստեղծւած է ցորենի և ալիւրի փոխառութիւն: Այսինքն, Կովկասում ապրող Վասպուրականցի ընտանիքները տալիս են Վանի պահեստին իրենց թողած ցորենը և դրա փոխարէն ստանում են ալիւր Բարեգործականի Կովկասի պահեստներից: Այդ կոմքինացիան այն օգուտներն ունի, որ 1) հողի տակ թաքցրած շրջանի ցորեններն իզուր չեն փչանում, այլ գործադրում են շրջանում ապրող չունևոր գաղթականներին: 2) Կովկասում ապրող գաղթական վասպուրականցիները միջոց են ստանում որոշւած պայուկների վրայ աւելացնել նաև այդ ձևով ձեռք բերած ալիւրը և այդպիսով ծածկում են սուղ կարիքները: 3) Ժողովելով շրջանի աւելորդ ցորենը, գրկում է վաճառականներին ցորենի սպեկուլյացիայի հնարատրութիւնից և պահեստի գներն են, որ իշխում են շուկայում: Այլ կերպ, Վանում ցորենի փութը 10 րուբլի կը լինէր: 4) Պահեստն առանձնացրել է գարնանացան ցորենի սերմացուն, որը շատ դժւար է ձեռք բերել գարնանը: 5) Ազատել է տրանսպորտին մի քանի հազար փութ տեղափոխելու աշխատանքը, որը կը նստէր ընկերութեան վրայ տասնեակ հազարներ և այդպիսով Վան-Իզդիլի գծի տրանսպորտը, կամ նրա մի մասը այժմ տրամադրում է ուրիշ շրջանների գաղթականութեան պարենատրելու:

Եւ վերջապէս Վանի նման հեռաւոր անկիւնում, մաքուր և համեղ հացը ծախում է ֆունտը 10 կոպէկով:

Այդ ցորենները ընդհանուր առմամբ հին են և խոնաւ: Որպէսզի չը փչանան, Ընկերությունը գործի է ձգել մի հին ջրաղաց՝ չնչին ծախսերով, մաքրել և աղալ

8 Կովկասի Գայոց բարեգործական ընկերությունը (լուսավորական-մշակութային կազմակերպություն) հիմնվել է 1881թ. Թիֆլիսում, բժիշկ Բագրատ Նավասարդյանի նախաձեռնությամբ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օժանդակել է հայ կամավորական շարժմանը: Զգալի միջոցներ է տրամադրել հայ գաղթականության համար: Նրանց օգնելու համար ընկերությանը կից ստեղծել է կոմիտե: Բացել է հիվանդանոցներ, որբանոցներ և այլն: 1921թ. Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո լուծարվել է:

է տալիս ցորենը և ստացած ալիւրը բաց է թողնում գաղթականներին՝ Ընկերութեան խանութների կամ Քաղաքների միութեան միջոցով:

Բացի այդ, ի նկատի ունենալով տեղական հացթուխների անխիղճ խարդախութիւնը, որոնք հացի հետ խառնում են աւազ, տարեկան և փչացած ցորեն, Ընկերութիւնը քաղաքում բացել է երկու փուռ և եթէ կարիք զգացի՝ շատացնելու է նրանց թիւը:

Ուրեմն, ինչպէս կարելի է նկատել, ոչ մի ջանք չէ խնայած Վանի շրջանի բնակչութեան պարենատրումը ապահովելու համար: Եւ թոյլ ենք տալիս ասելու, որ յիշեալ տեսակետից այդ շրջանը գաղթականութեան ամենաբարեկեցիկ շրջաններից մէկը կարելի է համարել:

Պարենւորման խնդիր Սերմացու

Ուրիշ հարցերի նկատմամբ ընկերութիւնը նոյնքան աշաւորջ է եղել:

Ընկերութիւնը աշնանացանի սեզոնին շտապեցրել է կազմակերպութիւններին ժամանակին բաժանել սերմնացուն կամ սրա համար յատկացրած փողերը: Որովհետև սերմնացու ժամանակին չը գնեց, Յուլիսեան նահանջի պատճառով բաժանեց նպաստ, որ գիւղացիներն իրենք ձեռք բերեն սերմնացուն: Այդ ժամանակ ընկերութիւնն օգնութեան եկա՝ բաժանելով գիւղացիներին մօտ երկու հազար փութ ցորեն: Այդ քանակութիւնը լրացրեց մասամբ բնակչութեան սերմնացուի պակասը և առաջիկայ տարւայ համար: Յաջող հանգամանքներում, առաջիկայ տարւում շրջանը 15-20 հազար փութ ցորեն աւելի կունենայ: Ցանւած է գլխատրապէս ջրովի և պարարտ հողեր և լաւ պայմաններում՝ վերցրած թերը չափազանցութիւն չեն:

Վար ու ցանքսը գաղթականութեան ամենակարևոր գործերից մէկն է: *Պէտք է ամենալալսն չափով օժանդակել գիւղացուն, որպէսզի առաջիկայում նա իր սեփական հացովն ապրի:* Այդ առաջիկայ տարւայ պարենատրման կնճռոտ խնդիրն է, որ անհրաժեշտ էր լուծել այս տարի, այլապէս, Վասպուրականը ամայի կը դառնայ, քանի որ անկարելի է հարիրատր վերստեր ճանապարհով երկիր ներմուծել հարիր-հազարատր փութերով հացահատիկ, որը եթէ կարելի էլ լինէր՝ շատ թանկ կը նստէր Վանում: Եւ, վերջապէս, գիւղացին չի՝ կարող տարիներ շարունակ փողով հաց գնել:

Յարաբերութիւններ

Ընկերութիւնը տեղական իշխանական շրջանների հետ սերտ յարաբերութեան մէջ է մտել, որպէսզի չը հալածի և չը հարստահարի գաղթականութիւնը: Պարզել է շատ թիւրիմացութիւններ զօրքի և բնակչութեան մէջ, ազդեցութիւն է ունեցել դադարեցնելու խոտերի ձրի գրաւումը: Երբեմն ինքը սակարկել է գները յօգուտ գիւղացիների, վերջիններիս կողմից: Մի բան, որ չի յաջողել մեր դիմումներով դադարեցնել տալ, դա անտէր տների սիստեմատիք կործանումն է, որը այժմ էլ շարունակւում է, սակայն ո՛չ բացարձակ, ինչպէս առաջ էր, այլ գաղտնի կերպով, խուլ փողոցներում: Քանզում են ու տանում, ինչ պէտք կարող է գալ վառելիքի համար: Բայց յոյս կայ, որ գեներալ-նահանգապետ Բուրգօվսկու գալով՝ ամեն ինչ կարգի կընկնի:

Ֆուրածի խնդիր

Ընկերությունը ձեռք է բերել բազմաթիւ տրանսպորտի ուտեստի պաշարը: Բայց, որովհետև տրանսպորտի եզների մի մասը հիւանդացու և մնաց Վանում ձմեռելու, հաւանական է, որ խոտի պաշարը հատնի: Այդ դեպքում եզներին ստիպուած ենք լինելու տեղափոխել Պարսկաստան:

Վան-Իզմիր և Վան-Խոյ-Ջուլֆա գծերի վրայ ֆուրածի պաշարի բացակայութիւնը ընկերութեան խոշոր պակասութիւններից մէկն է: Այդ բանը հետևանք պէտք է համարել նախկին լիազօրի անտարբերութեան: Գարնանը, չնչին գներով կարելի էր այդ գծերի վրայ տասնեակ հազար փութերով ֆուրած կենտրոնացնել: Այժմ սայլերը բեռի կէտը ֆուրած են վերցնում, որի փութի վրայ 8 բութի գալով քրէիը դժար չէ երևակայել, թէ որքան թանկ է նստում, սակայն այդ էլ չի բաւում և ճանապարհին սայլերը ստիպուած են լինում լրացնել պակասը ամենաթանկ գնով:

Կրթական հարց

Ընկերութեան ներկայացուցչի սրտին մօտ է եղել նաև կրթական հարցը: Երրորդ տարին է արդէն, որ մի քանի հազար Վասպուրականցի երեխաներ գրկուած են դպրոցից: Ապահով շրջաններում բանալով դպրոցներ, դրանով քրդական հարձակումների վտանգը չի աւելանալու, քանի որ երեխաները ինչպէս տներում, այնպէս էլ դպրոցներում միևնոյն վիճակին են ենթարկուած: Մինչդեռ դպրոցը գիւղի մէջ մտցնում է որոշ կարգ և կանոն և վարժապետների ուժերը, որ գոյութիւն կունենան դպրոցների ներկայութեամբ, վտանգի ժամանակ կարող են մեծ դեր խաղալ:

Եւ առհասարակ Վասպուրականի գիւղը առանց դպրոցի, ներկայ պայմաններում մի սիրտ մաշող մթնոլորտ է դարձել, որտեղ տիրապետում է գռեհիկ ու անկազմակերպ անհատականութիւն:

Կենդրոնական Կոմիտէին մենք ներկայացրել էինք երկու նախահաշիւ՝ մէկը 8000 բութիւն նախահաշուով 3 դպրոցի՝ մօտ 400 երեխայի համար, միւրը 7 դպրոցի՝ 15000 բութիւնով նախահաշուով՝ 750 երեխայի: Չը նայելով, որ եօթն դպրոցի գոյութիւնն էլ անհրաժեշտ էր, Կենդրոնականը՝ լիազօրեց բանալու միայն 3 դպրոց, որոնք բացուած են այժմ Վանում, Ալիւր և Լեսկ գիւղերում: Դպրոցների սակաւութեան պատճառով աշակերտութեան թիւը չափազանց աճում է: Ալիւր գիւղում միայն Ալիւրցի 400 աշակերտ կայ դպրոցական հասակի, որոնցից ընդունուած են միայն 250 հոգի՝ շէնքի փոքրութեան պատճառով, բայց տեղ է պատրաստում 3 դպրոցների համար՝ աշակերտների թիւ շատաւալու պատճառով, որը կը հասնի համարեայ թէ 7 դպրոցների համար նախագծուած թիւին: Ուրեմն, մեծանում է նաև դպրոցական նախահաշիւը, դուրս գալով

9 Փախստականներին և կամավորներին օգնություն կազմակերպելու նպատակով, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը 1914 թ. սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում կայացած համագումարում ընտրում է Հայկական կենտրոնական կոմիտե բաղկացած 24 անդամից: Կոմիտեի անդամներն էին՝ Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (պատվավոր նախագահ), Սամսոն Հարությունյանը (նախագահ), Ալ. Խատիսյանը, Հովս. Խունուցը, Ա. Մելիք-Ազարյանը և ուրիշներ: Ռուսական իշխանությունների կողմից պաշտոնապես ճանաչվել է 1915 թ. օգոստոսի 30-ին և ներկայացուցիչ ուներ Ներքին գործերի նախարարությունում հանձնի Պետական դումայի անդամ Մ. Աճեմյանի:

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ 2010
Ի(Ը) տարի, թիվ 1(29), Խունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական համոզան

իր նախկին 8000 ռ[ուբլու] շրջանակից: Այսու ամենայնի դեկլարում է այն սկզբունքով, որ ամեն մի աշակերտը 22 ռուբլուց ատելի չի նստի և այդպիսով կ'ստեղծվի որոշ նորմա՝ դպրոցական ծախսերի վերաբերությամբ:

Արժանի է ուշադրության այն հանգամանքը, որ նպաստների թիւը շատացել է և եթէ այս տարի էլ դպրոցներ չը բացւէին, այդ թիւը ատելի կը բազմանար, իսկ առաջիկայ տարում դպրոցները կունենային միայն այբուբենային դասարաններ:

Բացում դպրոցների ուսուցչութիւնը Վանի երիտասարդութիւնից է: Նրանց մէջ կան շատ պատրաստում ոյժեր և համակրելի դէմքեր: Դպրոցների բացումով հնարաւորութիւն ենք տւել մի քանի երիտասարդների ևս մնալ իրենց հայրենի երկրում, որի համար նոքա անհրաժեշտ են:

Այդ բոլորից յետոյ, դարձեալ խմբում են յարգելի *Կոմիտէիդ թոյլ փաւ բանալու երկու դպրոց ևս Թիմարի շրջանում՝ Էրէրէն և Խժիշկ գիւղերում*, որոնց երկուսը միասին կունենան 300 աշակերտութիւն: Ծախքերի նախահաշիւի նորման միննոյնն է: Ուսուցիչները կը հրաւիրեն տեղացի երիտասարդութիւնից:

Դրանից բացի, առաջարկում են յարգելի *Կոմիտէիդ՝ սևյապաղ հրաւիրել մի աւագ ուսուցիչ Ալիի որ գիւղի դպրոցի* համար: Եւ, որովհետև ռուսերէն լեզուն այժմեանից անհրաժեշտ է վասպուրականցու համար, աւագ ուսուցիչը պիտի աւանդի նաև ռուսաց լեզու:

Կազմակերպութիւնները և մասսան

Ապագայի նկատմամբ դրութիւնը Վանում ունի իր մռայլ և պայծառ հեռանկարները:

Մռայլ կողմերից մէկն այն է, որ կազմակերպութիւնները գործնականապէս շատ քիչ են գրաւում Վանի գաղթականութեամբ: Բացի Պլատոնական ախ ու վախից ոչինչ չի՝ նկատում: Հրաժարում են նոքա գործելուց, այն պատրակով, թէ երկիրն ապահով չէ, այնտեղ թափած ծախքերը կը կորչեն: Բայց չէ՞ որ այդ ծախքերը ժողովրդի համար են, իսկ ժողովուրդը շարունակում է այնտեղ ապրել: Նշանակում է նոքա կատարելիք ծախքերին ատելի են արհեստում, քան 18000 ազգաբնակչութեանը: Ընդհակառակը, փորձերը ցոյց տւին, որ բնակչութեան կազմակերպումը նազեցնում է վտանգի չափը, իսկ անկազմադրութիւնը միշտ խուճապ է ստեղծում և դրանից առաջանում է կորստաբեր հետևանքներ: Հենց այդ տեսակետից իսկ *սևհրաժեշտ է Վանում*, եթէ ոչ կազմակերպութիւններ, գոնէ լինի *կազմակերպում – մասսայի՝ կենդրոնացած մի ուժեղ և հրաւասու մարմնի ձեռքում*: Այդ իսկ *տեսակետից ցանկայի է, որ այդ ընկերութիւնները, որոնք չեն գործելու երկրում, իրենց հաւակնութիւնն ու աջակցութիւնը փային Բարեգործական ընկերութեան Վանի բաժանմունքին*:

Մի ուրիշ մռայլ կողմը այն է, որ աղէտի ժամանակ ընկերութիւնները ժողովրդից առաջ են թողնում երկիրը, ենթարկելով ամեն ինչ պատահականութեան կոյր բաղտին: Այդպէս եղաւ Յուլիսեան նահանջի ժամանակ, որի հետևանքը իր ամբողջ սարսափներով յայտնի է ամենին: Թշնամին չկար: Փախսան, այսպէս ասած, ազգի ներկայացուցիչները՝ իրենց հետ ժողովրդի մի մասը, որոնք ենթարկեցին ճանապարհին սովի, զրկանքի և քրդական յարձակումների: Շէն ու կենդրոնացած քաղաքը թալանեց, գործիքները և պահեստները կորան:

Այդպես չէր այս անգամ. Բարեգործականը իր շուրջը խմբեց Վանեցի երիտասարդությունը, որի մի մասը ուղարկեց ժողովրդի առաջ և մի մասը՝ ժողովրդի հետ, կարգադրեց հաւաքել Թիմարում փոխադրական միջոցներն ու ինքնապաշտպանական ուժեր: Եւ, նոյնիսկ, հակառակ կառուարութեան կարգադրութիւններին, ներկայացուցիչը մնաց դատարկւած Վանում՝ ենթարկելով վտանգի, միայն թէ մինչև վերջին բռայէն կարողանայ ազատել պահեստները:

Հետևանքն յայտնի է Ձեզ: Ընկերութեան պահեստները փրկեցին առաջացած հրդեհից ու թալանից և 18 հազար գաղթականութիւնը ազատուեց սովից:

Վասպուրականցու առանձնահատկութիւնը

Վասպուրականցին անփոխարինելի է իր տոկունութեան մէջ, միայն հարկաւոր է օգտել նրա ուժերից, ծառայեցնել նրա այդ յատկութիւնը հէնց իր օգտին: Նա թափանցիկ է աղետի ժամին, շատ պարզ է ըմբռնում իրերի դրութիւնը, հարկաւոր է միայն չը շփոթեցնել, արհեստական կերպով չ'ստեղծել խուճապ: Այդ ժողովուրդը որոշել է չը թողնել իր հայրենի հողը: Այդ է նրա գոյութեան խնդրի միակ լուծումը և ուրիշ կերպ էլ չի՛ կարող լինել: Հարկաւոր է նրան աջակցել այդ գործում և ո՛չ յուսահատեցնել: Ահա այս կէտին հրաւիրում ենք Ձեր առանձին ուշադրութիւնը:

Տեսէք այդ ժողովուրդը նահանջի ժամին: Ամեն տեղ Շատախցին մարտի է ելած: Կայքն ու երեխան միակ Բաշօ եզան բռնած Թիմար է ճամբել: Կէս գիշերին Շատախցի կինը փրկութեան ուխտի ճամբան բռնելով՝ քայլում է դանդաղ, տխուր քայլերով: Մոռայլ ու վշտալից մտախոհութեան մէջ կարծես արհամարհում է վտանգից նահանջով ազատած կեանքը, կարծես ափսոսում է, որ թողնում է հարազատ հողն ու օջախը, կարծես ուզում է յետ դառնալ, նայել հրդեհում ծխացող օթևանին և նրա մօտ կռող մարտիկ ամուսնուն:

Այդ սև օրերի տագնապի ժամին Թիմարցին անխռով կերպով իր արտն է հերկում: Նա պարզ հայացքով նայում է երբեմն դէպի Ախթամար, որտեղ հնչում է քրդական զէնքի գուժկան շաչիւնը, նայում է, ու շարունակում իր արտը հերկել: Գարնանը այդտեղ նա սերմ է ձգելու, հոգ չէ նրա համար, թէ ո՛վ է հնձելու իր ձգած սերմի բերքը: Եւ, իրօք, ո՞վ է հնձելու ամառը Վանի դաշտերը՝ հա՞յը, թէ քիւրդը՞, այդ աստուած գիտէ:

Նոր հովեր ու յարաբերութիւններ

Վանի հեռանկարի կանաչագոյն ցողերից մէկն էլ այն է, որ տեղական իշխանութիւնը կարծէք հասկացել է, որ քրդի հետ բարեկամանալը անկարելի բան է: Իշխան Շախօվսկու և գեներալ Վօրօնօվի Վանից հեռանալուց յետոյ իշխանութիւնը կանգնեցրել է քրդերին փայփայելը: Միայն Բերկրիի և մի քանի տեղերի կօմենդանտներ [պարետ] դեռևս շարունակում են քրդերին զէնք կրելու արտօնութիւն տալ: Ռուսական զօրքերը սկսում են վերջապէս հասկանալ, որ հայերն այնքան էլ ատելի չեն, ինչպէս կարծում էին: Վարք ու բարքերի կատարեալ հակապատկերը, լեզւի չիմանալը և տնտեսական հողի վրայ ծագած թիրիմացութիւնները դարձնում են հային անախորժ, անտանելի: Մէկը չէր եղել այդ թիրիմացութիւնների առաջն առնելու:

Բ(Ը) փարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԷՄ համահայկական հանդես

Այդ ուղղութեամբ ևս շատ բան է արւած: Զինուորականութեան հետ շփում ունենալուց ո՛չ թէ պէտք է խուսափել, ինչպէս առաջ էր, այլ ընդհակառակը, *պէտք է աւելի անկեղծ և մօտ շփում ստեղծել նրանց հետ*: Անթիւ է չարիքը, երբ մեր ժողովուրդն ու կազմակերպութիւնները փակուում են իրենց անհատական կեղևի մէջ՝ զինուորականութեան հանդէպ:

Գեներալ Բուրգովսկի

Գեներալ Բուրգովսկու Վանում նահանգապետ նշանակելը¹⁰ իրատուք է տալիս մեծ յոյսեր ունենալ իշխանութեան բարեացականութեան վրայ: Գեներալը եկել է ո՛չ թէ իշխելու, այլ կառավարելու: Նրա գալստեան առթիւ ընկերութեան ներկայացուցիչը մի խնջոյք սարքեց, որտեղ հրաւիրեցին քաղաքական և զինուորական իշխանութիւնների ներկայացուցիչները: Ջերմ հայրենասիրական կենաց-ճառերով շեշտուեց իշխանութիւնների անբարեխիղճ վարմունքը դէպի այն ժողովուրդը, որ ամեն ինչ գոհել է յանուն ռուսական գէնքի յաղթանակի: Ճառերը բուռն ոգևորութիւն և համակրանք առաջացրին զինուորականների շրջանում դէպի տաճկահայր: Այդպիսի խնդիրները թողնում են անզնջելի և դրական հետքեր: *Յանկալի էր չ՛զլանալ սպազայում ևս այդ ուղղութեամբ ընթանալու*:

Կառուարչական կազմակերպութիւն

Գեներալ-նահանգապետը սկսել է շրջանը վերածել գաւառների և մասերի, նշանակել կառուարիչներ և այլ պաշտօնեաներ: Տարաբախտաբար, նահանգապետը չունի հայերէն թարգման, իսկ բնակչութիւնից ոչ ոք ռուսերէն չը գիտէ: Պաշտօնեաների նախահշի մէջ չէ նախատեսնում հայերէն թարգման: Մեզ է մնում հրաւիրել մի օրինագէտ թարգման Կոմիտէի ծախքերով և կազմակերպել մեր գրասենեակին կից *գաղթականներին օգնող մի իրաւաբանական քիւրօ*: Դա կամուրջ կը դառնայ ժողովրդի և կառավարութեան փոխ-յարաբերութիւնների: Այլ կերպ, այդ ժողովուրդը դառնալու է ռուսական կարգերի նահատակը՝ լեզու չիմանալու պատճառով:

Կազմակերպութիւնների դիրքն ու պարտականութիւնները Վասպուրականի հանդէպ

Վանի շրջանը, շատ հասկանալի պատճառներով, կազմակերպութիւնների կողմից արժանի է առանձին ուշադրութեան, բայց, իրականութեան մէջ, մենք տեսնում ենք հակառակը: Հարկատու է պարգել ընկերութիւնների դիրքն ու անելիքը Վասպուրականի վերաբերութեամբ:

Այդ հարցի վերաբերութեամբ եղած կարծիքները բազմաթիւ և բացասական են: Մէկն ասում է՝ Վանում գործելը ոճրագործութիւն է, միւսն ասում է՝ երկիրն ապահով չէ, երրորդն ասում է՝ այնտեղ ժողովրդին պահելը մի ճակատագրական խաղ է և վերջապէս՝ ուրիշներն ասում են, թէ մէկը չկայ այդ ժողովրդին ասելու՝ ինչու՞ է ապրում կոտորածի վայրերում:

¹⁰ Գեներալը Վանի նահանգապետ է նշանակվել 1916թ. հոկտեմբերի 10-ից 15-ն ընկած ժամանակահատվածում: Տե՛ս «Աշխատանք», Երևան, N 48, 15 հոկտեմբերի, 1916:

Այդ կարծիքները դրական ոչինչ չեն տալիս ժողովրդին, բայց յուսահատեցնում են նաև տեղում մնացած գործիչներին և եթե իրապես մի աղետ պայթի, վերջիններս են պատասխանատու հանդիսանալու: Փիլիսոփայ քննադատները պիտի պոռան հրապարակով, թե տեսաք նրանց նախազգուշացուցին, բայց չը լսեցին և վերջ վերջոյ ժողովուրդը կոտորել տւին:

Երբեք ցանկալի չէ այդպիսի զարհուրելի պատասխանատուքիւն վերցնել: Պետք է մի անգամ ընդ միշտ պարզել, որ մի անհատը չի՝ կարող մի ամբողջ ժողովրդի ճակատագրի պատասխանատուն լինել: Մի դէպք պատահելուց, ամեն ինչ պիտի բարդեն նրա շլինքին և յախտենական մատի փաթաթան շինեն:

Պետական Դումայի անդամ պ. Մ. Պապաջանեանը¹¹ նոյն բանն ասաց, ինչ որ շատերը՝ այսինքն՝ մէկը չեղաւ, որ Վանեցիներին ասի, թէ ինչու՝ են սպարում վտանգած վայրում:

Թում է, թէ մեր գործիչների խայտառակ փախուստը աւելի շատ բան ասաց, քան մի հասարակ նախազգուշացումը: Աւելի ևս: Կազմակերպութիւնների խառն ժողովում որոշում կայացուեց, որ երկրում գործելը վտանգաւոր է և այլն և այլն: Բայց և այնպէս, ժողովուրդը մնաց իր տեղը մտած, հակառակ նախազգուշացման, հակառակ վտանգի, իսկ գործիչները մնացին Կովկասում, որովհետև երկրում վտանգ կայ: Նոքա իրենց կեանքն ու պետական կոպէկներն աւելի գնահատեցին, քան 18 հազար ժողովրդի գոյութիւնը:

Ժողովուրդը մնաց իր տեղը մտած և միշտ էլ մնալու է՝ մինչև աղետի մի նոր փոթորիկ նրան չը պոկի հարազատ հողից ու նետի հեռու:

Չը պետք է ձեռքերը ծալած նստել և մեքենայօրէն կրկնել, թէ երկրում վտանգ կայ, այլ պետք է մտածել այդ վտանգի առաջն առնելու մասին, քանի որ երկիրը թողնել չենք կարող:

Անհնարին է երկիրը դատարկել

Ժողովուրդը մնում է Վասպուրականում, նոյնիսկ իր կեանքը վտանգելով, որովհետև նրա համար ուրիշ ելք չկայ: Միայն Վանի մէջ 5000-ից աւելի մնալուն տուն կայ և նոյնքան էլ պտղատու այգի: Դոքա կազմում են միլիոնների հարստութիւն, իսկ ամբողջ շրջանի շէն գիւղերի հետ մի հարստութիւն, որը կարելի է ստեղծել միայն դարերի ընթացքում: Թողնել այդ բոլորը, նշանակում է երկիրն աւերակների մատնել: Եւ ասել, թէ ինչու է ժողովուրդն այնտեղ սպարում, միևնոյն է, թէ ասել՝ «ինչու՝ Վասպուրականը քար ու մոխիր չի՝ դառնում»:

11 Պապաջանյան Միքայել (1868-1929) - պետական և քաղաքական գործիչ, մասնագիտությամբ իրավաբան: 1905թ. հոկտեմբերից Բաքու քաղաքի հայ ծխական եկեղեցիների հոգաբարձուների խորհրդի անդամ, իսկ 1908-ից՝ նախագահ: 1911թ. հոկտեմբերից «Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության» անդամ: 1912թ. ընտրվում է Ռուսաստանի չորրորդ պետական դումայի անդամ: Խորհրդարանում հարում է կադետական կուսակցությանը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զգալի գործունեություն է ծավալել արևմտահայ փախստականներին օգնելու համար: 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ընտրվել է Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՍ) անդամ: Որպես կոմիտար տնօրինել է հողագործության նախարարության գերատեսչային, ուղեւային, արդարադատության, սահմանային և զաղթականական գործերը: Նույն թվականին Ս. Հարությունյանի և այլոց հետ հիմնադրել է Հայ ժողովրդական կուսակցությունը: 1921-1923թթ. եղել է Ազգային պատվիրակության անդամ, 1926-ից՝ Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ:

ԻԿ(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական հանդես

Այն գիտերը, որոնք արդեն թողած են, այժմ գերեզմանոց են: Այդպես է դրամ տաճկական ֆրոնտում [ռազմաճակատում]: Քանի՛, քանի՛ տարիներ են հարկատր, որ այդ մոխրակույտերը կրկին վերածին գիտերի: Թողնել Վասպուրականը, նշանակում է տասնեակ հազար ժողովուրդը ենթարկել ուրիշի կամքին: Մեր շեն երկրի մեջ քիտրը պիտի բուն դնի, Տաճկա-Հայաստանի միակ օազիսը անապատի պիտի վերածի: Եւ, վերջապես, 18000 գաղթական պիտի աւելանայ Կովկասի գաղթականութեան թի վրայ, իսկ կռից յետոյ, նրանց երկիրը վերադառնալուց, քանի միլիոն փութերով հաց պիտի կրել Կովկասից, որպէսզի նրանց հնար լինի սպրեցնել, մինչև որ նրանք վարեն, ցանեն և իրենց աշխատանքի պտուղն ստանան:

Այդ իհարկէ անկարելի բան է: Ուրեմն, աւելորդ է կշտամբել, թէ ինչո՛ւ է մնում այնտեղ ժողովուրդը: Ինչո՞ւ՞ վիատեցնել նրանց, որոնք քրդական եաթա-ղանի տակ դարձեալ չեն թողնում իրենց հայրենի դաշտն ու արօրը:

Վասպուրականի դատարկման տաք կողմնակիցները, որոնք ախ ու վախով յօդած են գրում, կասեն, թէ իրենց խօսքը Հայոց-Չորի դատարկման մասին էր, որին անմիջական վտանգ էր սպառնում և ո՛չ Թիմարի, որն աւելի ապահով է:

Կարիք չկայ ապացուցել, որ Թիմարը ապահով էր հենց շնորհիւ նրան, որ նրա առաջ կանգնած էր առաջապահ պատնէշով Հայոց-Չորի ժողովուրդը: Այդ պատնէշը արդէն գոյութիւն չունի և այժմ վտանգն սպառնում է Թիմարին:

Ինքնապաշտպանութեան և զենքի խնդիր

Հարկատր է մի քիչ այդ ուղութեամբ մտածել: Եւ, առհասարակ, փոխանակ գաղթի յորդոր կարդալու, *աւելի նպատակայարմար կը լինէր միջոցներ ստեղծել ժողովրդի գոյութիւնը երկրում ապահովելու:*

Մի Բէհրի բէկ կամ մի Խուրշուտ բէկ կարողանում են զինել ռուսական զենքերով իրենց ցեղակիցներին: Ամբողջ հայ ժողովուրդը իր պատգամա-տորներով, կաթողիկոսով¹² և այլ հիմնարկութիւններով չ'կարողացան մի քիտր Բէհրի բէկի ազդեցութիւն ձեռք բերել Ռուսական շրջաններում: Միթէ՞ Վասպուրականցիին, որ անթիւ գոհերով իր հաւատարմութիւնն է ապացուել Ռուսական կառավարութեանը, չ'է կարող քրդերի չափ էլ պատիւ ձեռք բերել և արտօնութիւն ստանալ զենք կրելու: Թւում է, թէ մեր ազգի ներկայացուցիչները պարտատր են խնդրել, կամ նոյնիսկ պահանջել կառավարութիւնից, որ Վանեցիներին զենք տրուի իրենց գոյութիւնը պաշտպանելու համար:

Անցեալ ամսում Վանի չորրորդ նահանջը տեսանք: Գուցէ տեսնենք 5-րդը, 6-րդը: Ոչինչ չէ արւած մման նահանջը տեղի չունենալու համար: Ընդհակա-ռակը, եթէ ոչ աւելին, Յուլիսեան նահանջը, որ ամենակործանիչն էր, տեղի ունեցաւ մեր գործիչների շնորհիւ:

Հարց չը տրուեց կառավարութեան, թէ այնտեղ ապրում էր 30000 բնակչու-թիւն, ուղարկւած է բազմաթիւ լծկաններ, գութաններ, գործիք և սերմացու հէնց իշխանութեան կարգադրութեամբ: Ինչո՞ւ է ապահովում կառավարութիւնը այդ հսկայական գանձը և դրա հետ կապւած հսկայական աշխատանքը: Հարց չը տրուեց, թէ ինչո՞ւ տեղական իշխանութիւնները զինում են դաւաճան քրդերին, իսկ Ռուսաստանի հաւատարիմ Վասպուրականցի հայից առնում նրա զենքը:

¹² 12 Գևորգ Ե Սուրենյանց (Տփղիսեցի)-1911-ից մինչև 1930 թվականները եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Մեր գործիչներն այդ մասին միայն գաղտնի փսփսալ գիտեն, իսկ այդպիսի փսփսոցներն աւելի են մեղաւորեցնում մեզ, քան եթէ ազատօրէն հրապարակով գոռային ճշմարտութիւնը:

Թում է, թէ դեռևս ուշ չէ: Դեռ ժամանակ կայ մտածելու 5-րդ նահանջի դառն բաժակը յետ կասեցնելու Վասպուրականցու շրթունքից: Թում է, երբ ասորիների Մարշիոնը¹³ կարողանում է զինել իր ժողովուրդը ինքնապաշտպանութեան համար, նոյն իրաւունքը կարող է ձեռք բերել նաև Հայոց Կաթողիկոսը Վասպուրականցիների համար, որոնց աւելի վերահաս վտանգ է սպառնում քան Պարսկաստանում ապրող ասորիներին:

Եթէ զենք կրելու իրաւունք տրւեր, Վանի շրջանում կապրէին 40-50 հազար զաղթականութիւն, որից 20000-ը զենքի ընդունակ: Դա կը լինէր մի բանակ, որը ո՛չ միայն չէր փախչի մի 1000 քրդի ներկայութիւնից, այլև մի խոշոր պատնէշ կը լինէր կռիւ ճակատում: Ռումիական դէպքերից յետոյ թրքական ուժերն ազատ են համարում Եւրօպական ճակատից Կովկաս նետելու:

Նորի Մեծութիւն փոխարքայի¹⁴ կարգադրութեամբ, Պարսկաստանում ապրող Բաշկալէի զաղթականներին պէտք է վերաբնակեցնել Բաշ-Կալէի շրջանում: Երկիրն աւերած է, վար ու ցանքս չի՛ արւած և 10000 բնակչութիւն պէտք է ապրի դրսից ներմուծած մթերքներով: Ամսական հարկատու է միայն 15000 փութ հաց: Եթէ 15000 փութ էլ ուրիշ մթերքներ հաշւէինք, երևակայեցէք, թէ ինչ՝ օրոգ [գումակ] է հարկատու, ինչքան դրամ, ճիգ ու ջանք, այդ ձեռնարկի համար: Այդ փորձը թողեց անկարելիութեան հանդէպ: Իսկ եթէ իրականանար, հարկատու է, առնուազն մի միլիոն բուրլի միայն նրանց համար տներ շինելու, որոնք աւերած են և փայտեղէն էլ չի ճարում, իսկ ապրեցնելու համար մինչև նրանց աշխատանքի բերքերը հասնելը՝ մի քանի միլիոն:

Վասպուրականը միթէ՞ չի կարող ինքնապաշտպանութեան իրաւունք ստանալ, որպէսզի մի հազար զինւած քրդի առաջ չը թաղէ միլիոնները ու փախչի Կովկաս, որ վաղն էլ չը նստի պետութեան զանչարանի նորանոր միլիոններ: Այդ պահանջում է պետական շահերի տեսակետը և այդ ուղղութեամբ շարքան կարող են անել մեր ազգի ներկայացուցիչները, եթէ ցանկանան:

Վերաշինութեան հարցեր

Կայ վերաշինութեան երկու մեթոդ՝ արագ և աստիճանաբար: Վերջինս ընթանում է ինքնըստինքյան աննկատելի ձևով: Հարկատու է միայն տալ

13 Մար-Շիմոն Բենիամինը ծնվել է 1880-ական թթ. Վանի նահանգի Ջուլամերկի գավառի Քոչանիս գյուղում: 1911 թ. օծվել է որպէս նեստորական ասորիների առաջնորդ (կաթողիկոս): Ռուսական հրամանատարութիւնը նրա գլխավորութեամբ կազմակերպում է երկու կամավորական խումբ (յուրաքանչյուրում՝ հազարական մարտիկ): Նրանց հանձնարարված էր քրդերից ազատել Յաքոբիի հարավային մասը: Հաղորդելով այս մասին, Իրագելը (Հ. Տեր Հակոբյան) մաղթում էր հաջողութիւն բախտակից ասորիներին «և միևնոյն ժամանակ մեծ զգուշութիւն և հեռատեսութիւն»: Տես «Վրէ», Բագու, N 124, 21 օգոստոսի 1916: Սակայն կարճ ժամանակ անց ասորական կամավորական խմբերը լուծարվում են, Ավդո ցեղի ցեղապետ Սիմկոն 1918 թ. մարտի 3-ին դավադրաբար սպանում է Մար-Շիմոն Բենիամինին, նրա եղբորը՝ Դավիթին և 60 թիկնապահներին:

14 Ռումանով Նիկոլայ Նիկոլայի (1856-1929).- մեծ իշխան, գեներալ, 1914թ. հուլիսի 7-ից մինչև 1915թ. օգոստոսի 23-ը ռուսական զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար: 1915թ. օգոստոսի 23-ին կայսր Նիկոլայ 2-րդի կողմից Գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնը ստանձնելուց հետո նշանակվել է Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար: Սակայն, բանակի իրական հրամանատարը հանդիսացել է գեներալ Ն.Ն. Յուդենիչը: Մեծ իշխանը զբաղվել է գլխավորապէս թիկունքային խնդիրներով: Նրա օրոք գործնական քայլեր են արվել Արևմտյան Հայաստանը, մասնավորապէս Ալաշկերտի հովիտը ռուս վերաբնակիչներով բնակեցնելու համար:

հնարաւորութիւն ժողովրդին ապրելու և աշխատելու: Այդ տեսակէտից պարե-
նաւորումը վերաշինութեան գլխաւոր հիմքն է: Ապահովելով ժողովրդի տնտե-
սական վիճակը, կեանքի պայմանները դարձում է նորմալ, ծնեցնում է ժողո-
վորդի մէջ շինարարական եռանդը, որը և վերանորոգում է աւերած
սեփականութիւնը: Այդ տեսակէտից, պարենաւորման մթերանոցներն ու խա-
նութները գաղթականական գործերից ամենագեղեցիկն ու ամենալաւագոյնն է,
որով կարելի է մխիթարել մեր տխուր իրականութեան մէջ:

Այդ գեղեցիկ ձեռնարկը լրացնելու համար *անհրաժեշտ էր նաև մի ուրիշ
չեռնարկ՝ աշխատանքի կազմակերպումը*: Այդ ուղղութեամբ շատ քիչ բան է
արւած: Մեր ջերմ ցանկութիւնն է, որ այդ գործն էլ ձեռնարկէր Բարեգործական
ընկերութիւնը, որն աւելի գործնական կազմակերպութիւն է: *Ի հարկէ, ցանկալի
է բոլոր կազմակերպութիւնների համագործակցութիւնը*: Աշխատանքի կազ-
մակերպութիւնը կայանում է նրանում, որ հարկաւոր է գիւղացուն, բանտրին ու
արհեստաւորին տալ գործիքներ և նիւթեր: Երկիրն աւերած է՝ բոլորդ այդ բանը
գիտէք: Վաղը սկսելու են վերաշինումը և այդ պարագային մի արշին
տախտակը 3 բուրլի է դառնալու, մի դրան փականքը տասն բուրլով հազիւ են
շինելու: Որպէսզի խնայել գաղթականների խղճուկ կոպէկները, հարկաւոր է
այժմ իսկ ժողովել փայտեղէն, որը փչանում է, տախտակ քաշել տալ,
գործիքներ շինել և այդ ձևի առարկաների համար մի պահեստ ստեղծել: Ահա
այդպիսով *կը պարենաւորենք ոչ միայն կենսամթերքներով, այլև
շինարարական անհրաժեշտ պարագաներով*:

Չարմանալի չէ, որ մի խոփ գոթելը այժմնս նստում է գիւղացու վրայ 16
բուրլի: Որտեղից ձեռք բերի նա այդ խոշոր գումարը: Մինչդեռ աշխատանքը
կազմակերպելով՝ մի խոփ սրիչը 4 բուրլի կը նստի և գիւղացին հեշտութեամբ
կը հոգայ այդ ծախսը: Կան շատ գործիքներ, որոնց կարելի է պատրաստել
ձմեռայ պայմաններում: Ինչ՞ու չը խնայել գիւղացիների ամառային ոսկի
ժամերը և այսօր չը գործադրել նրանց կարող ուժերը:

Վաղը կարող է Ռուսական ճակատը առաջ ընթանալ մինչև Բիթլիս կամ
աւելի խորը: Պէտք է պատրաստ լինել ինչպէս նահանջի, այնպէս էլ առաջ-
խաղացման: Հարկաւոր է իսկոյն ևեթ ազատած վայրերը բնակեցնել
գաղթականութեամբ և որ գլխաւորն է, գարնանը սերմ ձգել, որպէսզի ամբողջ
տարի ժողովուրդը քաղցով պատուհաս չը դառնայ:

Վաղն հարկաւոր է տասնեակ հազար փութերով սերմացու ներմուծել
գարնանացանի համար: Հսկայական աշխատանք է հարկաւոր, հսկայական
փոխադրութեան միջոցներ: Ոճրագործութիւն կը լինէր ձեռնունայն նստել այդ
հարցի առաջ:

Եզրափակելով ասածներս, մենք այն համոզմունքին ենք, որ Վասպուրա-
կանում դադարել գործունէութիւնը, իբր թէ երկրում վտանգ կայ, ոչնչով չի
կարելի արդարացնել և երկիրը չի՛ պահանջում հարիւր հազարներ: Ինչ որ տւել
էք, նրանով էլ բաւական է: Միայն թէ աջակցէիք, որ այն տուածն էլ ձեռնից դուրս
չգայ: Տրւած է հազարաւոր լծկան: Եթէ ափսոսում էք նիւթական կորուստը,
հոգացէք, որ այդ եզները սովից չը կոտորեն: Խոփեր շինեցէք, փայտեղէն
պատրաստեցէք և ոչինչ ձրի մի բաժանէք գիւղացուն, միայն թէ տուէք նրան
մատչելի գներով և այդ կը լինի վերաշինութեան ամենալաւ ձևը:

Ուրեմն հարկաւոր է.

D) Կազմակերպութիւնների համագործակցութիւն Վանում: Գործը կարելի է կենտրոնացնել մի տեղ և միացնել: Գործնականապէս այդ ձևը աւելի նպատակայարմար է:

II) Ունենալ քաղաքականութեան որոշ ուղղութիւն և ամեն միջոցով աշխատել, իրագրել դարձնել մեր դրացի ռուսներին մեր ժողովրդի դէպի նրանց տաճած սէրն ու համակրանքը:

III) Սիացեալ ուժերով դիմել ուր որ հարկն է և կազմակերպել ժողովրդական ինքնապաշտպանութիւն:

IV) Բանալ երկու դպրոց Խժիշկ և Էրէրին գիւղերում, հրաւիրել մի ռուսագէտ աագ ուսուցիչ Ալիւր գիւղի համար, տալ անխտիր կերպով հագուստ և չուստեր բոլոր աշակերտներին: Վերջինիս բացակայութիւնը չափազանց ծանր կազդէ երեխաների առողջութեան վրայ և շատ աշակերտներ կոշիկ չունենալու պատճառով դպրոց չեն կարող յաճախել: Անհրաժեշտ է տալ աշակերտներին սնունդ, եթէ ոչ ճաշ, գոնէ նախաճաշիկ: Տներում կերած մի կտոր չոր հացով նոքա անկարող են աշխատել ամբողջ օրը:

V) Բանալ արհեստանոցներ, դարբնոց, ատաղծագործարան և տախտակ պատրաստելու գործարան:

VI) Սի գումար յատկացնել Հայոց Չորից եկած 2000 գլուխ անասուններ կերակրելու համար:

VII) Հրաւիրել մի ռուսագէտ պաշտօնեայ և կազմակերպել մի Բիւրօ ժողովրդին իրաւաբանական օգնութիւն ցոյց տալու համար:

VIII) Այժմեանից պատրաստել սերմացու և գիւղատնտեսական պարագաներ՝ գարնանացանի համար: Գնումներ անել և փոխադրել երկիր:

IX) Կազմակերպել գորքին փայտ մատակարարելու գործը, որպէսզի փայտի բացակայութեան պատճառով տները չ'քանդեն և փայտեղենը չը օգտագործեն վառելիքի համար: Այդ ձեռնարկի համար հարկատր է շրջանառութեան մէջ դնել մօտաւորապէս 5000 թուրքի դրամ:

և X) Ունենալ 5 ֆուրգօն, որոնց ծախքերը հոգացելու են փայտի վաճառումից գոյացած արդիւնքով:

Ահաւասիկ այդ իմ առաջադրած 10 կետերից բաղկացածներից ամենաանհրաժեշտ կարիքներն են Վան շրջանի, որոնց կատարումով տանելի կեանք կարելի է ստեղծել Վասպուրականում և ազգաբնակչութեանը ազատել գալիք մեծամեծ և ծանր դժարութիւններից:

Կ[ովկասի] Հ[այոց] Բ[արեգործական] Ընկ[երութեան] Վանի և Պարսկաստանի շրջանների լիագօր՝ D[octor] [Համագաւապ] Օհանջանեան [ստորագրութիւն]

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 1-29: Բնագիր: Չեռագիր:



Ա. Պետրով, Հայ փախստականներ. 1915թ.